600.0170.17.05.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մայիսի 2017 թվականի №170Ա
քաղ. Երևան

«ԱՍ-ՆԵՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏՎԱԾԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետը, 10-րդ, 17-րդ, 17.1 հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն որոշումը և «ԱՍ-ՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի մայիսի 2-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում** է.

1. Բավարարել «ԱՍ-ՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը և Արարատի մարզում անլար հասանելիության լայնաշերտ ցանցի կազմակերպման համար տրամադրել 5650-5655ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման թույլտվություն՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 9-ը գործողության ժամկետով:

2. Հաստատել «ԱՍ-ՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Արարատի մարզում անլար հասանելիության լայնաշերտ ցանցի կազմակերպման համար տրամադրվող 5650-5655ՄՀց ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. «ԱՍ-ՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սույն որոշումն ընդունվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում 900005330213 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետով տրամադրված թույլտվության տրամադրման վճարի 99 տոկոսը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
17 մայիսի 2017թ.
ժամը 16 ՀՀ